Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Գործ. ՍԴ3/0003/01/13

28 հոկտեմբերի 2013թ. ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Կ.ՂԱԶԱՐՅԱՆ
Հ.ՏԵՐ- ԱԴԱՄՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Լ.ՓՈԼԱԴՅԱՆԻ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

ՄԵՂԱԴՐՈՂ՝ Կ.ԱՂԱԲԵԿՅԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆ՝ Գ.ԲԱԲԱՅԱՆԻ
ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼՆԵՐ՝ Է.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻ

ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա.ՍԱՔՈՒՆՑԻ

Դռնբաց դատական նիստում վճռաբեկության կարգով քննության առնելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցի և մեղադրող Կ.Աղաբեկյանի վերաքննիչ բողոքները՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հովհաննես Աշոտի Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, Էրիկ Միքայելի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և Գևորգ Վիրաբի Մանուկյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի օգոստոսի 06-ի դատավճռի դեմ.

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>1/. Գործի դատավարական նախապատմությունը և փաստական հանգամանքները.</u>

29.02.2012թ. ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ա.Ոսկանյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 90851312 քրեական գործը թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի կառավարման դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տիգրան Վանոյի Վարյանի կողմից 2012թ. փետրվարի 29-ին ժամը 10.00-ի սահմաններում դիտակետում դիտորդի

պարտականությունները կատարելու ժամանակ, իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի <<ԲԼ>> 7492 համարի ինքնաձիգից իր ծնոտի ստորին շրջանին կրակոց արձակելու, հրազենային վնասվածքով տեղում մահանալու փաստի առթիվ:

03.03.2012թ-ին Հովհաննես Աշոտի Հակոբյանը ձերբակալվել է:

06.03.2012թ. նախաքննության մարմնի կողմից Հ.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 375-րդ հոդվածի 1-ին մասով, 375-րդ հոդվածի 1-ին մասով, 375-րդ հոդվածի 1-ին մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով և 375-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի ղեկավարման դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2011թ. նոյեմբերին, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը, իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի կողմից արթուն հերթափոխի պարտականությունները կատարելու ժամանակ քնելու պատճառով, ոտքով մեկ անգամ հարվածել է նրա գլխի շրջանին, դրանով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, զինվորական գոտին իրեն չտալու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը մեկ անգամ ապտակել և 4 անգամ ոտքերով հարվածել է վերջինիս մարմնի տարբեր հատվածներին, դրանով իսկ էական վնաս հասցնելով զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, նոր զուգարանի համար փոս փորելու պահանջը չկատարելու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը հայհոյանք է տվել նրա հասցեին, և 3 անգամ ձեռքով հարվածել է վերջինիս կրծքավանդակին, դրանով իսկ էական վնաս հասցնելով զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2012թ. հունվարի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում, ժամը 15.00-ի սահմաններում, մարտկոցի ճաշարանում իր գլխարկը բերելու պահանջը չկատարելու պատճառով, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը՝ սեռական բնույթի հայհոյանք է տվել իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հասցեին և 3 անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակի շրջանին, դրանով իսկ էական վնաս հասցնելով զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Բացի այդ, Հ.Հակոբյանը, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու, խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները, 2012թ. փետրվարի 28-ին ժամը 16.00-ի սահմաններում ինքնակամ թողել է մարտական դիրքը, հացի մեքենայով գնացել է նույն զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի մշտական տեղակայման վայր և նույն օրը ժամը 21.00-ին վերադարձել է հրամանատարական կետ, դրանով իսկ սպառնալիք ստեղծել հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դիմակայելու համար:

Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու 2012թ. փետրվարի 28-ին ժամը 21.30-ի սահմաններում, իրեն հայհոյելու պատճառով, վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը սեռական բնույթի հայհոյանք է տվել վերջինիս հասցեին և մեկ անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակին, դրսնով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

24.08.2012թ. Հ.Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով և 365-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի ղեկավարման դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2011թ. նոյեմբերին, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, անցնելով իր պաշտոնեական լիազրությունների սահմանը, իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի կողմից արթուն հերթափոխի պարտականությունները կատարելու ժամանակ քնելու պատճառով, ոտքով մեկ անգամ հարվածել է նրա գլխի շրջանին: Բացի այդ Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, զինվորական գոտին իրեն չտալու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը մեկ անգամ ապտակել և 4 անգամ ոտքերով հարվածել է վերջինիս մարմնի տարբեր հատվածներին: Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, նոր զուգարանի համար փոս փորելու պահանջը չկատարելու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը հայհոյանք է տվել նրա հասցեին և 3 անգամ ձեռքով հարվածել է վերջինիս կրծքավանդակին:

Բացի այդ Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր

գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2012թ. հունվարի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում, ժամը 15.00-ի սահմաններում, մարտկոցի ճաշարանում իր գլխարկը բերելու պահանջը չկատարելու պատճառով, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը՝ սեռական բնույթի հայհոյանք է տվել իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հասցեին և 3 անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակի շրջանին: Բացի այդ Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերական դիրքն ընդգծելու նպատակով, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու 2012թ. փետրվարի 28-ին ժամը 21.30-ի սահմաններում, իրեն հայհոյելու պատճառով, վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը սեռական բնույթի հայհոյանք է տվել վերջինիս հասցեին և մեկ անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակին, որոնց հետևանքով Տ.Վարյանը 2012թ. փետրվարի 29-ին ժամը 10.00-ի սահմաններում ԿՍ-19 մարտկոցի հրամանատարական դիտակետում իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի <<ԲԼ>> 7492 համարի ինքնաձիգից կրակոց է արձակել իր ծնոտի ստորին շրջանին և ստացած հրազենային մարմնական վնասվածքից տեղում մահացել է, դրանով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին՝ պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝ տուժող Տ.Վարյանի մահը:

Բացի այդ Հ.Հակոբյանը, նշանակված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու, խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները, 2012թ. .փետրվարի 28-ին ժամը 16.00-ի սահմաններում ինքնակամ թողել է մարտական դիրքը, հացի մեքենայով գնացել է նույն զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի մշտական տեղակայման վայր և նույն օրը ժամը 21.00-ին վերադարձել է հրամանատարական կետ, դրանով իսկ սպառնալիք ստեղծել հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դիմակայելու համար:

Բացի այդ, Հ.Հակոբյանը նշանակված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու, խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները և մարտական հերթապահության կազմակերպման ու անցկացման կանոնադրության պահանջները, հսկողություն չի իրականացրել դիրքի անձնակազմի նկատմամբ, գրաֆիկի համաձայն չի կատարել հերթափոխերը, ինչի հետևանքով մարտական հերթապահության նշանակված զինծառայողները սահմանված ժամերին չեն իրականացրել հակառակորդի դիրքերի դիտարկում, չեն կատարել արթուն հերթափոխի դիտորդի պարտականությունները, որով իսկ սպառնալիք ստեղծել հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դիմակայելու համար:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.03.2012թ.որոշմամբ մեղադրյալ Հ.Հակոբյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2/երկու/ ամիս ժամկետով, կալանքի սկիզբը հաշվելով 03.03.2012թ-ից: Նույն դատարանի 25.04.2012թ., 22.06.2012թ., որոշումներով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է յուրաքանչյուր անգամ 2/երկու/ ամիս ժամկետով, 27.08.2012թ., որոշումով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 1/մեկ/ ամիս ժամկետով:

Նույն դատարանի 24.09.2012թ., 26.11.2012թ. որոշումներով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է յուրաքանչյուր անգամ 2/երկու/ ամիս ժամկետով:

07.03.2012թ.նախաքննության մարմնի կողմից Է.Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, 359-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի ղեկավարման դասակի կապի ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ, 2012թ. փետրվարի 27-ին, ժամը 17.00-ի սահմաններում ընդգրկված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 հրամանատարական կետում որպես դիտորդ, կացարանում, ափսեները չլվանալու պատճառով վիճաբանել է նույն ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի հետ, որի ընթացքում, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ստորացրել է վերջինիս պատիվն ու արժանապատվությունը՝ հայհոյանք է տվել նրա հասցեին և բռնություն է գործադրելով՝ մեկ անգամ բռունցքով հարվածել է Տ.Վարյանի կրծքավանդակին:

Բացի այդ, Է.Սարգսյանը 2012թ. փետրվարի 28-ին ժամը 21.30-ի սահմաններում ընդգրկված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 հրամանատարական կետում որպես դիտորդ, կացարանում, առանց հիմնավոր պատճառի խախտել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ստորացրել նույն ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի պատիվն ու արժանապատվությունը՝ հայհոյանք է տվել նրա հասցեին և բռնություն գործադրելով՝ մեկ անգամ բռունցքով հարվածել է Տ.Վարյանի կրծքավանդակին:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.03.2012թ. որոշումով մեղադրյալ Է.Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2/երկու/ ամիս ժամկետով, կալանքի սկիզբը հաշվելով 07.03.2012թ-ից: Նույն դատարանի 27.04.2012թ., որոշումամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2/երկու/ ամիս ժամկետով, 27.06.2012թ. որոշումով կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 1/մեկ/ ամիս ժամկետով:

ՀՀ ՊՆ թիվ 3 կայազորի զինվորական դատախազի ժամանակավոր պաշտոնակատար, Ա.Աղաբեկյանի 02.08.2012թ. որոշմամբ մեղադրյալ Է.Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել թիվ 38862 զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ոսկանյանի 04.08.2012թ. որոշմամբ մեղադրյալ Է.Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ հրամանատարության հսկողությանը հանձնելը փոփոխել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

Նախաքննության մարմնի կողմից Գ.Մանուկյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, այն բանի համար, որ նա հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի տնտեսական ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով 2012թ. փետրվարի 21-ին ժամը 18.00-ի սահմաններում հանդիսանալով մարտկոցի ճաշարանի տվյալ օրվա վերակարգում նշանակված իր նկատմամբ ստորադրյալ, նույն մարտկոցի զինավարման դասակի կապի

ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Ն.Կարապետի կողմից մաքրության աշխատանքները ժամանակին չկատարելու պատճառով, սեռական բնույթի հայհոյանք է տվել և 3 անգամ բռունցքով հարվածել է վերջինիս կրծքավանդակի շրջանին, դրանով իսկ էական վնաս հացնելով զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 13.03.2012թ. որոշմամբ մեղադրյալ Գ.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը 2/երկու/ ամիս ժամկետով, կալանքի սկիզբը հաշվելով 13.03.2012թ-ից:

Նույն դատարանի 03.05.2012թ., որոշմամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2/երկու/ ամիս ժամկետով, 03.07.2012թ. որոշմամբ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 1/մեկ/ ամիս ժամկետով:

ՀՀ ՊՆ թիվ 3 կայազորի զինվորական դատախազի ժամանակավոր պաշտոնակատար, Ա.Աղաբեկյանի 02.08.2012թ. որոշմամբ մեղադրյալ Գ.Մանուկյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել թիվ 38862 զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճռով Հովհաննես Աշոտի Հակոբյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4/չորս/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով:

Պատժի ժամկետի սկիզբը հաշվվել է ձերբակալման օրվանից՝ 03.03.2012թ-ից:

Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2 դրվագով քրեական գործի վարույթը կարճվել, քրեական հենապնդումը դադարեցվել է արարքի ապաքրեականացման հիմքով:

Հ.Հակոբյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ կալանավորումը, թողնվել է անփոփոխ, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Էրիկ Միքայելի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով և դատապարտվել. ՀՀ քր.օր.-ի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2012թ. փետրվարի 27-ի դրվագով՝ ազատազրկման 3/երեք/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ 2012թ. փետրվարի 28-ի դրվագով՝ ազատազրկման 3/երեք/ ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կանոններով հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելով՝ նշանակված պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է որոշվել ազատազրկում 4/չորս/ ամիս ժամկետով:

Պատժի ժամկետի մեջ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 07.03.2012-02.08.2012թթ. 4/չորս/ ամիս 25/քսանհինգ/ օր՝ կալանքի տակ գտնվելու 1 օրը հաշվելով ազատազրկման 1 օրվա դիմաց և պատիժը համարվել է կրած:

Է.Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վճռվել է վերացնել դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Գևորգ Վիրաբի Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և դատապարտվել ազատազրկման 4/չորս/ ամիս ժամկետով:

Պատժի ժամկետի մեջ համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվակցվել է կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը՝ 13.03.2012-02.08.2012թթ. 4/չորս/ ամիս 19/տասնինն/ օր՝ կալանքի տակ գտնվելու 1 օրը հաշվելով ազատազրկման 1 օրվա դիմաց և պատիժը համարվել է կրած:

Գ.Մանուկյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ թիվ 38862 զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը փոփոխվել է, մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրությունը չհեռանալու մասին:

Գործով քաղաքացիական հայց չի հարուցվել, տուժողի իրավահաջորդին իրավունք է վերապահվել քաղաղացիական դատավարության կարգով քաղաղացիական հայց ներկայացել դատարան՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով:

2/. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերոհիշյալ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքներ են բերել տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցը և մեղադրող Կ.Աղաբեկյանը՝ հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով.

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցը գտել է, որ նախաքննությունը և դատաքննությունը չեն բերել Տիգրան Վարյանի մահվան հանգամանքների լիարժեք բացահայտմանը և մեղավորների արժանի պատժի, որի արդյունքում խախտվել են <<Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի>> 2-րդ և ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածները:

Մասնավորապես, ըստ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի՝ քրեական գործի նյութերով հիմնավորված չէ ինչպես Տ.Վարյանի ինքնասպանության, այնպես էլ նրան մեկ այլ անձի/անձանց/ կողմից ապօրինաբար, դիտավորյալ կյանքից զրկելու վարկածի հերքումը:

Ոչ նախաքննությամբ, ոչ էլ դատաքննությամբ չի պարզվել Տ.Վարյանի մահվան փաստի հետ կապված կարևոր հանգամանքներ, մասնավորապես, չի պարզվել, թե կոնկրետ որտեղ են գտնվել Հ.Հակոբյանը, Է.Սարգսյանը և Ռ.Առաքելյանը դեպքի պահին, ինչ գործողություններ են կատարվել, գնահատական չի տրվել նրանց ցուցմունքների միջև գոյություն ունեցող հակասություններին:

Վարույթն իրականացնող մարմինը քննությամբ չի պարզել, թե կոնկրետ որտեղ է գտնվել Տ.Վարյանի դիակը, ավագ լեյտենանտ Հ.Հակոբյանի, ինչպես նաև Է.Սարգսյանի և Ռ.Առաքելյանի գործողությունները վկայում են կատարված հանցագործությունը կոծկելու նպատակ հետապնդելու հակվածության մասին: Տ.Վարյանի մահվան դեպքի վերաբերյալ նշանակվել և կատարվել էծառայողական քննություն, քրեական գործի նյութերի և ծառայողական քննության նյութերի միջև գոյություն ունեն էական հակասություններ:

Տիգրան Վարյանի մահվան վերաբերյալ գործի նախաքննությունը չի կատարվել լրիվության, բազմակողմանիության, անկողմնակալության սկզբունքներով, ամեն կերպ փորձ է արվել խուսափել Տիգրան Վարյանի մահվան համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելուց, ինչը ենթադրում է ՀՀ գործադիր իշխանության ազդեցությունը գործի քննության ու ելքի վրա:

Նախաքննության և դատաքննության ընթացքում թույլ են տրվել քրեադատավարական օրենքի այնպիսի էական խախտումներ, որոնք ազդել են գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության վրա, և որոնք չեն կարող վերացվել դատական քննությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչը միջնորդել է բեկանել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. թիվ ՍԴ3/0003/01/13 քրեական գործով դատավճիռը և գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Մեղադրող Կ.Աղաբեկյանը գտել է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճռով Հովհաննես Աշոտի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված 4 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկումն ակնհայտ մեղմ պատիժ է: Բացի այդ, Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով /երկու դրվագով/ քրեական գործի վարույթը կարճվել և քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքի ապաքրեականացման հիմքով:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քրեական գործի կարճման միակ հիմք է համարել այն, որ հանցակազմի օբյեկտիվ կողմ հանդիսացող գործողությունը՝ <<վնաս պատճառելու սպառնալիք ստեղծելը>>, ապաքրեականացվել է: Մեղադրողը գտել է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը <<ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ ԱԺ-ի կողմից 30.04.2013թ. ընդունված օրենքի համաձայն՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները և սխալ է կիրառել օրենքը:

ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի դիսպոզիցիայում կատարված փոփոխությունը՝ <<Հայաստանի Հանրապետության վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը վնաս է պատճառել>> դատարանի կողմից գնահատվել է որպես նախկին խմբագրությամբ <<վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել>> ապաքրեականացում: Դատարանը գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը նյութական է և հետևանքների առկայությունը՝ այն էլ ռեալ հետևանքների, պարտադիր է, ինչն էլ հիմք ընդունելով՝ կարճել է գործի վարույթը:

Ըստ մեղադրողի՝ չնայած նրան, որ <<վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել>> հասկացությունը հանվել է հանցակազմի դիսպոզիցիայից, այնուհանդերձ չի հանվել <<վնաս>> հասկացությունը: Այսպես, ընդհանուր իրավասության դատարանը, հիմնվելով հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների՝ <<վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել>> հասկացության վրա, ըստ էության անդրադարձ է կատարել հանցագործության հետևանքին, որը նյութական հանցակազմերում հանցագործության պարտադիր հատկանիշ է հանդիսանում: Վնաս պատճառելու սպառնալիք ստեղծելը հանցագործության հետևանքն է, որն անմիջական կապի մեջ է գտնվում հանցավորի գործողությունների հետ:

Ընդհանուր իրավասության դատարանի այն պնդումը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը՝ <<վնաս պատճառելու սպառնալիք ստեղծել>> հասկացությունը ապաքրեականացվել է՝ անհիմն է, քանի որ ցանկացած հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է գործողությամբ կամ անգործությամբ, որոնք տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ են հանդիսանում: Սույն քրեական գործով հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշը՝ գործողությունը, ըստ էության չի կարելի նույնացնել օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշի՝ հանցագործության հետևանքի հետ, քանի որ դրանք տարբեր իրավական հասկացություններ են, հետևանքը հաջորդում է գործողությանը կամ անգործությանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասում կատարված փոփոխությամբ <<վնաս պատճառելու սպառնալիք>> հասկացությունը հանվել է և դիսպոզիցիայում մնացել է <<եթե այդ արարքը վնաս է պատճառել>> հասկացությունը:

Ըստ մեղադրողի՝ այդտեղ խոսքը վերաբերում է հանցագործության հետևանքին:Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճիռը տվյալ մասով պատճառաբանված չէ և անհիմն է: Ընդհանուր իրավասության դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, այն է՝ ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, ուստի դատական ակտը ենթակա է բեկանման, քանի որ ամբաստանյալ Հ.Հակոբյանի կատարած արարքներով ոչ նյութական բնույթի վնաս է հասցվել և նոր օրենքի իմաստով նրա արարքը չի կարող ապաքրեականացվել:

Մեղադրողը գտել է նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատիժը՝ 4 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկումը, ակնհայտ մեղմ է, չի համապատասխանում վերջինիս կատարած արարքի բնույթին, հանրության համար վտանգավորության աստիճանին, ինչպես նաև նրա անձին:

Ընդհանուր իրավասության դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ ամբաստանյալ Հ.Հակոբյանի կատարած արարքի հետևանքով վրա են հասել ծանր հետևանքներ, այն է՝ զինծառայողը զրկվել է կյանքից: Դատարանը հաշվի չի առել հանցանքի կատարումից հետո ամբաստանյալի դրսևորած վարքագիծը, այն, որ նա դեպքից հետո համածառայակիցներին հորդորել է խեղաթյուրել դեպքի հանգամանքները՝ սեռական բնույթի հայհոյանք դնելով իրականությունը իրավապահ մարմինների աշխատակիցներին պատմողի ծնողի հասցեին՝ նպատակ ունենալով խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից:

Մեղադրողը գտել է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ, այսինքն ճիշտ չի կիրառել քրեական օրենքը, ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի պահանջների խախտումների:

Ելնելով վերոգրյալից՝ մեղադրողը միջնորդել է Հովհաննես Աշոտի Հակոբյանի մասով բեկանել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճիռը, նրան մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով: ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակել պատիժ՝ ազատազրկում 6 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով՝ յուրաքանչյուր դրվագով՝ ազատազրկում 6 ամիս ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ՝ պատիժները լրիվ գումարելու միջոցով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 7 տարի ժամկետով:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցի վերաքննիչ բողոքի կապակցությամբ գրավոր պատասխան է ներկայացրել մեղադրող Կ.Աղաբեկյանը՝ միջնորդելով մերժել տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը:

Վերաքննիչ դատաքննության ընթացքում ամբաստանյալ Է.Սարգսյանը միջնորդեց <<ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ՝ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա կարճել իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով հարուցված քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

Մեղադրողը չառարկեց նման միջնորդությանը:

<u>3/.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները</u>

Վերաքննիչ դատարանը ստուգելով գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի նորմերի պահպանումը, լսելով տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի և մեղադրողի հիմնավորումները բողոքների կապակցությամբ, ամբաստանյալների և ամբաստանյալ Հ.Հակոբյանի պաշտպան Գ.Բաբայանի պատասխանները դրանց դեմ, ներկայացված բողոքների հիմքերի ու հիմնավորումների սահմաններում վերլուծելով քրեական գործի նյութերը, հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքները պետք է մերժել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճռով հիմնավորվել է հետևյալը.

Ամբաստանյալ Հ.Հակոբյանը, հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի ղեկավարման դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2011թ. նոյեմբերին, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանը, իր նկատմամբ ստորադրյալ, նույն դասակի կապ ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի կողմից արթուն հերթափոխի պարտականությունները կատարելու ժամանակ քնելու պատճառով, ոտքով մեկ անգամ հարվածել է նրա գլխի շրջանին: Բացի այդ Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, զինվորական գոտին իրեն չտալու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը մեկ անգամ ապտակել և 4 անգամ ոտքերով հարվածել է վերջինիս մարմնի տարբեր հատվածներին: Բացի այդ, Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, կրկին 2011թ. նոյեմբերին նշանակված լինելով մարտական հերթապահության որպես մարտկոցի հրամանատարական կետի պատասխանատու, նոր զուգարանի համար փոս փորելու պահանջը չկատարելու պատճառով վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը հայհոյանք է տվել նրա հասցեին, և 3 անգամ ձեռքով հարվածել է վերջինիս կրծքավանդակին:

Բացի այդ Հ.Հակոբյանը, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով, 2012թ. հունվարի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում, ժամը 15.00-ի սահմաններում, ամրտկոցի ճաշարանում իր գլխարկը բերե,ու պահանջը չկատարելու պատճառով, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանը՝ սեռական բնույթի հայհոյանք է տվել իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հասցեին և 3 անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակի շրջանին: Բացի այդ Հ.Հակոբյանը հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերական դիրքն ընգծելու նպատակով, նշանակված լինելով մարտական հերթապահության մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի

պատասխանատու 2012թ. փետրվարի 28-ին ժամը 21.30-ի սահմաններում, իրեն հայհոյելու պատճառով, վիճաբանել է իր նկատմամբ ստորադրյալ, շարքային Տ.Վարյանի հետ և անցնելով պաշտոնական լիազորությունների սահմանը սեռական բնույթի հայհոյանք է տվել վերջինիս հասցեին և մեկ անգամ բռունցքով հարվածել նրա կրծքավանդակին, որոնց հետևանքով Տ.Վարյանը 2012թ. փետրվարի 29-ին ժամը 10.00-ի սահմաններում ԿՍ-19 մարտակոցի հրամանատարական դիտակետում իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի <<ԲԼ>> 7492 համարի ինքնաձիգից կրակոց է արձակել իր ծնոտի ստորին շրջանին և ստացած հրազենային մարմնական վնասվածքից տեղում մահացել է, դրանով իսկ էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին՝ պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին, որն էլ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝ տուժող Տ.Վարյանի մահը:

Բացի այդ Հ.Հակոբյանը, նշանակված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 մարտկոցի հրամանատարական կետում որպես մարտական դիրքի պատասխանատու, խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները, 2012թ. .փետրվարի 28-ին ժամը 16.00-ի սահմաններում ինքնակամ թողել է մարտական դիրքը, հացի մեքենայով գնացել է նույն զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի մշտական տեղակայման վայր և նույն օրը ժամը 21.00-ին վերադարձել է հրամանատարական կետ, դրանով իսկ սպառնալիք ստեղծել հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դիմակայելու համար:

Բացի այդ, Հ.Հակոբյանը նշանակված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 մարտկոցի հրամանատարակն կետում որպես մարտական դիրքի պատասխանատու, խախտելով մարտական հերթապահության կրելու կանոնները և մարտական հերթապահության կազմակերպման ու անցկացման կանոնադրության պահանջները, հսկողություն չի իրականացրել դիրքի անձնակազմի նկատմամբ, գրաֆիկի համաձայն չի կատարել հերթափոխերը, ինչի հետևանքով մարտական հերթապահության նշանակված զինծառայողները սահմանված ժամերին չեն իրականացրել հակառակորդի դիրքերի դիտարկում, չեն կատարել արթուն հերթափոխի դիտորդի պարտականությունները, որով իսկ սպառնալիք ստեղծել հակառակորդի անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դիմակայելու համար:

Ամբաստանյալ Է.Սարգսյանը, հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի ղեկավարման դասակի կապի ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ, 2012թ. փետրվարի 27-ին ժամը 17.00-ի սահմաններում ընդգրկված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 հրամանատարական կետում որպես դիտորդ, կացարանում, ափսեները չլվանալու պատճառով վիճաբանել է նույն ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի հետ, որի ընթացքում, խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ստորացրել է վերջինիս պատիվն ու արժանապատվությունը՝ հայհոյանք է տվել նրա հասցեին և բռնություն է գործադրելով՝ մեկ անգամ բռունցքով հարվածել է Տ.Վարյանի կրծքավանդակին:

Բացի այդ, Է.Սարգսյանը 2012թ. փետրվարի 28-ին ժամը 21.30-ի սահմաններում ընդգրկված լինելով մարտական հերթապահության ԿՍ-19 հրամանատարական կետում որպես դիտորդ, կացարանում, առանց հիմնավոր պատճառի խախտել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, ստորացրել նույն ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի պատիվն ու

արժանապատվությունը՝ հայհոյանք է տվել նրա հասցեին և բռնություն գործադրելով՝ մեկ անգամ բռունցքով հարվածել է Տ.Վարյանի կրծքավանդակին:

Ամբաստանյալ Գ.Մանուկյանը հանդիսանալով թիվ 38862 զորամասի ԿՍ-19 մարտկոցի տնտեսական ջոկի հրամանատար, կոչումով կրտսեր սերժանտ, հանդիսանալով պետ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, այն է՝ խիստ պետի տպավորություն թողնելու և իր գերակա դիրքն ընդգծելու նպատակով 2012թ. փետրվարի 21-ին ժամը 18.00-ի սահմաններում հանդիսանալով մարտկոցի ճաշարանի տվյալ օրվա վերակարգում նշանակված իր նկատմամբ ստորադրյալ, նույն մարտկոցի ղեկավարման դասակի կապի ջոկի ավագ ռադիոհեռախոսավար, ժամկետային զինծառայող, շարքային Տ.Վարյանի կողմից մաքրության աշխատանքները ժամանակին չկատարելու պատճառով, սեռական բնույթի հայհոյանք է տվել և 3 անգամ բռունցքով հարվածել է վերջինիս կրծքավանդակի շրջանին, դրանով իսկ էական վնաս հասցնելով զինվորական ծառայության շահերին, պետ-ստորադրյալ փոխհարաբերություններին:

Քրեական գործի նախաքննության և դատաքննության ընթացքում հաստատվել է, որ Տ.Վարյանի մահը վրա է հասել ինքնասպանության, այլ ոչ թե սպանության հետևանքով, ձեռնարկվել են բոլոր հնարավոր քննչական և դատավարական միջոցառումները՝ հանցագործությունը բացահայտելու համար, մեղավորները ենթարկվել են քրեական պատասխանատվության և պատժի:

Ինչ վերաբերում է տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքի պահանջին՝ գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին, ապա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածը, որը նախատեսում էր գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու ինստիտուտը՝ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից քրեադատավարական օրենքի էական խախտումներ թույլ տալու դեպքում, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում, ՀՀ Սահմանադրական դատարանի 24.07.2007թ. թիվ ՍԴՈ-710 որոշմամբ ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր, հետևաբար տուժողի իրավահաջորդի վերաքննիչ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է մեղադրողի վերաքննիչ բողոքին, ապա այն ևս ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 30.04.2013թ. 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. <<ՀՀ վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը վնաս է պատճառել, պատժվում է կարգապահական գումարտակում պահելով առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ մեկից երկու տարի ժամկետով կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով>>:

Հանցանքը կատարելու ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ վրա անակնկալ հարձակումը ժամանակին հայտնաբերելու և դրան դիմակայելու կամ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, եթե այդ արարքը վնաս է պատճառել կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է ստեղծել, պատժվում է

կարգապահական գումարտակում պահելով առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Փաստորեն, օրենքի փոփոխությամբ ապաքրեականացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմը՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայության կրելու կանոնների խախտմամբ վնաս պատճառելու սպառնալիք ստեղծելու ձևով հանցակազմը, այսինքն օրենսդիրը վերացրել է այդ հոդվածի ձևական հանցակազմով հանցագործության համար պատասխանատվությունը, ինչի համար էլ մեղադրանք է առաջադրվել Հ.Հակոբյանին, ուստի այդ մասով նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել, քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքի ապաքրեականացման հիմքով, արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

Անդրադառնալով ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով նշանակված պատժից ավելի խիստ պատիժ նշանակելու վերաբերյալ մեղադրողի վերաքննիչ բողոքի պահանջին՝ Վերաքննիչ քրեական դատարանը գտնում է, որ այն ևս ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումը անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը որոշելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի՝ վերը նշանակված նպատակներին, որոնք փոխկապակցված ու փոխհամաձայնեցված են, /մեկ նպատակը ենթադրում է մյուսները, և յուրաքանչյուրի ինքնուրույն իրականացումն օժանդակում է մյուսներին/: Այսինքն՝ պատժի նպատակներին հասնելու երաշխիք է հանցագործություն կատարած անձի նկատմամբ արդարացի և արարքի ծանրությանը և հասարակական վտանգավորությանը համապատասխան պատիժ նշանակելը:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները որոշիչ հանգամանքներ են պատժի տեսակը և չափը որոշելու հարցում:

Այսինքն, դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատուկ հատկանիշները, որոնք կարող են ազդել հանրության համար

վտանգավորության աստիճանի վրա /հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության աստիճանը և այլն/:

Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձնավորությունը, դրանք բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը:

Պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք են ոչ միայն արարքի հասարակական վտանգավորության աստիճանը, այլև հանցավորի անձը բնութագրող բոլոր հատկանիշները՝ ընտանեկան դրությունը, առողջական վիճակը, դատվածությունը, դրսևորած վարքագիծը աշխատանքում, շրջապատում և կենցաղում, տարիքը և այլն, և պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակն ու չափը ընտրելիս համոզվի, որ կհասնի պատժի նպատակներին:

Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-63-րդ հոդվածներով նախատեսված պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին, և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը:

Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերվում են ինչպես հանցագործության, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ բնութագրում է միաժամանակ և հանցագործությունը, և հանցավորի անձնավորությունը:

Այդ իսկ պատճառով պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցագործության կազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերվում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում են պատժի վրա:

Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից ու վերլուծությունից ակհայտ է դառնում, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրվող ամբաստանյալ Հովհաննես Աշոտի Հակոբյանի նկատմամբ պատժի տեսակն ու չափը որոշելիս ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, արդեն իսկ հաշվի է առել և դատավճռի հիմքում դրել է մեղադրողի կողմից վերաքննիչ բողոքով ներկայացված պահանջները և բավարար չափով ստուգման ու պատշաճ գնահատության է ենթարկել նրա կողմից կատարած հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, անձը բնութագրող տվյալները, մասնավորապես այն, որ ամբաստանյալ Հ.Հակոբյանի կատարած հանցանքը դասվում է ծանր հանցանքների թվին, ամբաստանյալը նախկինում դատված չէ, ամուրի է, բնութագրվում է բացասական և պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների բացակայության պայմաններում ամբաստանյալի նկատմամբ նշանակել է արդարացի պատիժ, ինչը բխում է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքից՝ համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, դրանք կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար և կարող է ապահովել ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված պատժի

նպատակները, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, կանխել հանցագործությունները:

Այսպիսով, մեղադրողի վերաքննիչ բողոքը, որով վերջինս ըստ էության վիճարկում է ամբաստանյալի կողմից կատարած արարքի բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը և գտնում, որ դատարանը ամբաստանյալի նկատմամբ նշանակելով մեղմ պատիժ, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի վերոգրյալ դրույթների /10-րդ, 48-րդ հոդվածի 2-րդ մասի, 61-62-րդ հոդվածների/ պահանջները՝ պետք է մերժել՝ նկատի ունենալով, որ մեղադրողը իր հետևությունները չի պատճառաբանել ու չի ներկայացրել իր պահանջը հիմնավորող և սույն գործի տվյալներից բխող համապատասխան փաստարկներ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով մեղադրվող Հ.Հակոբյանի վերաբերյալ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի օգոստոսի 6-ի դատավճռով ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս չեն խախտվել ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների պահանջները, վերջինիս նկատմամբ նշանակված պատիժը արդարացի է, այն համապատասխանում է կատարված հանցանքի ծանրությանը, ամբաստանյալի անձին, անհրաժեշտ և բավարար է նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար, դատարանի կողմից թույլ չի տրվել դատական սխալ, որը հիմք կհանդիսանար մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարելու և դատավճիռը ամբաստանյալ Հ.Հակոբյանի նկատմամբ նշանակված պատժի մասով խստացնելու համար, ուստի այս պայմաններում մեղադրողի վերաքննիչ պետք է մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով առաջին ատյանի դատարանի դատավճիռը:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Է.Սարգսյանի միջնորդությունը՝ իր նկատմամբ <<ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին>> ՀՀ ԱԺ 03.10.2013թ. որոշումը կիրառելու մասին, հանգում է հետևության, որ այն պետք է բավարարել՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական օրենսգրքի 82 հոդվածի համաձայն, հանցանք կատարած անձն օրենսդիր մարմնի կողմից ընդունվող համաներման ակտով կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, /.../:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն, քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթն ենթակա է կարճման, եթե՝ ընդունվել է համաներման ակտ:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԱԺ կողմից 03.10.2013թ. ընդունած <<Համաներում հայտարարելու մասին>> որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, քրեական հետապնդում չի հարուցվում և քրեական հետապնդում չի իրականացվում, ինչպես նաև կարճման ենթակա են մինչև 2013թ. սեպտեմբերի 1-ը կատարած հանցագործությունների վերաբերյալ հետաքննության մարմինների, նախաքննության մարմինների կամ դատարանների վարույթում գտնվող քրեական գործերը, բացառությամբ սույն որոշման 8-րդ կետի 4-6-րդ ենթակետերով և 9-րդ կետով նախատեսված դեպքերի, որոնցով անձինք կարող են մեղադրվել կամ մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար նախատեսված է պատիժ՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով ազատազրկում:

ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված է պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վերոհիշյալ համաներման ակտով նախատեսված՝ համաներման կիրառման սահմանափակումներն ամբաստանյալ Է.Սարգսյանի վրա չեն տարածվում:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԱԺ կողմից 03.10.2013թ. ընդունած <<Համաներում հայտարարելու մասին>> որոշումը կիրառելի է նաև ամբաստանյալ Գ.Մանուկյանի նկատմամբ՝ նշանակված պատժից ազատելու առումով, բայց նկատի ունենալով, որ Գ.Մանուկյանը 06.08.2013թ. դատավճռով նշանակված պատիժն արդեն իսկ կրել է, հետևաբար նրա նկատմամբ 03.10.2013թ. Համաներման ակտը կիրառելու և նրան արդեն իսկ կրած պատժից ազատելու անհրաժեշտություն չկա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 393-րդ, 394-րդ, 402-րդ հոդվածներով ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ա.Սաքունցի և մեղադրող Կ.Աղաբեկյանի վերաքննիչ բողոքները մերժել՝ օրինական ուժի մեջ թողնելով ամբաստանյալներ Հովհաննես Աշոտի Հակոբյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 2-րդ մասով և Գևորգ Վիրաբի Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճիռը:

Ամբաստանյալ Էրիկ Միքայելի Սարգսյանի մասով ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով, Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.08.2013թ. դատավճիռը բեկանել:

Կիրառել ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ <<Համաներում հայտարարելու մասին>> 03.10.2013թ. ԱԺ Որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետը, կարճել Էրիկ Միքայելի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով՝ երկու դրվագով հարուցված քրեական գործի վարույթը և դադարեցնել քրեական հետապնդումը:

Էրիկ Միքայելի Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին, վերացնել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատին՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

Իսկականի հետ ճիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ